ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը Անկախության 23-րդ տարեդարձին ընդառաջ ՈՒԽ 20-ամյակի միջոցառումների մեկնարկին

Հարգարժան պարոն նախարար, հարգելի հյուրեր, գործընկերներ, ուսանողներ

Այս ուսումնական տարեսկիզբը մեր համալսարանում մեկնարկել է հարուստ ու հագեցած. ուսումնական գործընթացին զուգահեռ սկիզբ են առել միջոցառումներ, հանդիպումներ: Իսկ այսօրվանից մեր համալսարանի ուսանողական խորհուրդը, որը բոլորում է իր երկու տասնամյակը, մեկնարկում է հոբելյանական միջոցառումների շարք:

Հարգելի բարեկամներ, այսօրվա միջոցառումը, ՀՀ Անկախության 23-րդ տարեդարձին ընդառաջ, առանձնահատուկ կարևություն ունի մեր պատմությունն արժևորելու, մեր հասարակության համար արժանավոր մարդ-քաղաքացիներ դաստիարակելու ու կերտելու տեսանկյունից:

Արցախյան ազատամարտը փառավոր էջեր գրեց մեր ժողովրդի հերոսական պատմության մեջ: Այդ տարիներին բազմաթիվ երիտասարդներ զենք վերցրին և միացան ազգային-ազատագրական պայքարին: Պայքարող մարտիկների շարքերում էին նաև մեր համալսարանի ուսանողներն ու դասախոսները:

Հարգանքի տուրք մատուցելով ու հավերժացնելով մեր անվեհեր տղաների հիշատակը՝ այս տարիներին համալսարանում նաև լսարաններ են անվանակոչվել, որոնք լցվել են հայրենասիրության շնչով, վարակել ուսանողներին բարձր ու վեհ գաղափարներով:

Անկախության տոնը նրանց տոնն է առաջին հերթին, քանզի մեր քաջասիրտ տղաները ոչ միայն հայրենիք էին ազատագրում, այլև պայքարում էին հանուն ազատ ու անկախ Հայաստանի: Ազատամարտիկ հերոսների անվան լսարանի բացումը մեր հարգանքի տուրքն է նրանց հիշատակին, յուրաքանչյուրիս ակնածանքն ու երախտագիտությունը, ինչպես նաև երիտասարդ սերնդին հերոսների ոգով կրթելու ու մարտական ոգին մշտարթուն պահելու ճանապարհ:

Սիրելի ուսանողներ, պատմության դասերը, անշուշտ, պետք է օրինակ լինեն ձեզ համար, բայց դուք՝ այսօրվա երիտասարդներդ, պետք է հիշեք, որ մարդիկ հերոսանում են ոչ միայն պատերազմում: Ձեր ամենօրյա աշխատանքում, ուսման առաջադիմությամբ դուք կարող եք կերտել հաջողություններ ոչ միայն ձեզ համար, այլև գործել ի շահ մեր պետության, ի բարօրություն մեր ժողովրդի: Կարծում եմ, դուք դրա համար անհրաժեշտ բոլոր հիմքերն ունեք:

Հարգելի պարոն նախարար, շնորհակալ եմ ձեզնից՝ մշտապես մեր բուհի կողքին լինելու, երիտասարդության հոգսերն ուշադրության կենտրոնում պահելու համար: Վստահ եմ, որ ձեր անցած պատվաբեր ճանապարհը, մարդկային արժանիքները, ձեր բարձր կերպարը մեր երիտասարդության համար ոգևորիչ օրինակ է:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս Անկախության տարեդարձի առիթով: Այս հրաշալի հանդիպումը նախաձեռնելու համար շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի երիտասարդական հիմնադրամին: Շնորհավորում եմ նաև մեր համալսարանի ուսանողական խորհրդին՝ հոբելյանական տարեդարձի կապակցությամբ:

Շնորհակալություն

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, Էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am